

ΥΠΟΥΡΓΕΙΟ ΠΑΙΔΕΙΑΣ, ΠΟΛΙΤΙΣΜΟΥ, ΑΘΛΗΤΙΣΜΟΥ ΚΑΙ ΝΕΟΛΑΙΑΣ
ΔΙΕΥΘΥΝΣΗ ΜΕΣΗΣ ΓΕΝΙΚΗΣ ΕΚΠΑΙΔΕΥΣΗΣ

ΕΝΙΑΙΑ ΓΡΑΠΤΗ ΑΞΙΟΛΟΓΗΣΗ ΤΕΤΡΑΜΗΝΩΝ 2022-23

Β' ΤΑΞΗ ΛΥΚΕΙΟΥ

ΗΜΕΡΟΜΗΝΙΑ 12.05.2023

ΕΞΕΤΑΖΟΜΕΝΟ ΜΑΘΗΜΑ: ΑΡΜΕΝΙΚΑ (Α' ΣΕΙΡΑ)

ΚΩΔΙΚΟΣ ΜΑΘΗΜΑΤΟΣ: Β012

ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ

ΣΥΝΟΛΙΚΗ ΔΙΑΡΚΕΙΑ ΓΡΑΠΤΗΣ ΕΞΕΤΑΣΗΣ: 135 λεπτά
Ο ΟΔΗΓΟΣ ΔΙΟΡΘΩΣΗΣ ΑΠΟΤΕΛΕΙΤΑΙ ΑΠΟ ΕΝΤΕΚΑ (11) ΣΕΛΙΔΕΣ

**1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
(30 նիշ)**

**Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ գրութիւնը եւ պատասխանեցէք
հարցումներուն:**

Ափ մը ցորեան ափերուդ մէջ թող լեցնեմ, կտրիճ Որդիս,
Կտրիճ Որդիս, գօտին մէջքիս. թող մաճակալ բազուկներէդ
Քսան ցուլի արիւն անցնի, եւ եղեւնի քու հասակէդ
Քսան տունի սիւնը կանգնի. եւ երբ թիւովը մատերուդ
Սերմանես քու սերմնցուդ՝ հնձես թիւովն աստղերուն:

Ափ մը ցորեան գլուխդ ի վար թող որ թափեմ, թոռնի՛կ սիրուած,
Թոռնիկ սիրուած, ցուպս ծաղկած. թող ճակատիդ վրայ գրուի
Հարիւր սաղմոս իմաստութեան, եւ ուսերուդ վրայ դրուի
Տապանակը զգաստութեան. ու երբ հօտիդ օր մ'այցելես՝
Թող քու ափիդ գարիին հազար ոչխա՛ր երկարին:

Ափ մը ցորեան մազերուդ մէջ թող որ տեղամ, վարդ թոռնուհիս
Վարդ թոռնուհիս, պսա՛կ շիրմիս. թող այտերուդ վրայ շողան
Ամէն գարուն նո՛ր կակաչներ. եւ աչքերուդ մէջը լողան
Ամէն ամառ նո՛ր ճաճանչներ. եւ երբ տնկես ճիւղ մ'ուռիի՛
Ամէն Ապրիլ դուն տեսնես իր շուքին տակ կանա՛նչ քեզ:

Ափ մը ցորեան, ափ մը ցորեան ա՛յ իմ պառաւ, ա՛յ իմ Աննա,
Մեր գլխուն ալ թող որ տեղայ, թող չսառի՛ արեւն աշնան
Մեր մազերուն ձիւներուն մէջ. չմարի՛ մեր մոմն իրիկուան
Ժամուն մարմար սիւներուն մէջ. ու երբ դրուինք մենք գերեզման՝
Մեր ներքեւ հո՛ղը, Աննա, քիչ մը կակուղ թող ըլլայ:

Դանիէլ Վարուժան <<Օրհնութիւն>>

Ա- Ընտանիքին մեծին կողմէ օրհնութիւնը խորհրդանշական ի՞նչ
ձեւով կը կատարուի: Ան ինչպէ՞ս կը կոչէ իր որդին: Գտէք եւ գրեցէք
խօսքը: Անոր փոխանցած առատութեան մաղթանքը ինչպէ՞ս
կ'արտայայտէ: Գրեցէք բանաստեղծին տողերը այս մասին: / 5 նիշ /

1

Ա - Ընտանիքին մեծին կողմէ օրհնութիւնը ափին ցորեն լեցնելու ,
գլխուն ցորեն թափելու խորհրդանշական ձեւով կը կատարուի:

-Կտրիճ որդիս, կը կոչէ:

-Առատութեան մաղթանքը կ'արտայայտէ այսպէս. << Երբ թիւովը
մատերուդ սերմանես քու սերմնցուղ հնձես թիւովը աստղերուն>>:

/ 3 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Բ- Թոռնիկին դիմած խօսքերէն ի՞նչ տպաւորութիւն կը ստանաք: Ան ալ սիրուած է: Ի՞նչ կ'ուզէ ըսել << Թող ճակատիդ վրայ գրուի հարիւր սաղմոս իմաստութեան>>: Կարելո՞ր մաղթանք է: Ինչու՞: Իսկ յաջողութեան անոր փափաքը ո՞ր խօսքին մէջ կը տեսնէք: Գտէք եւ գրեցէք: / 5 նիշ /

Բ - Այո, սիրուած է թոռնիկը: Կ'ըսէ << Թոռնիկ սիրուած, ցուպս ծաղկած>>:

-Այո, շատ կարելոր մաղթանք է:

-Կ'ուզէ իր թոռնիկը իմաստութիւն ունենայ կեանքի մէջ:

-Յաջողութեան մաղթանքը կ'երեւի. <<Հօտիդ օր մ'այցելէս՝ թող քու ափիդ գարիին հազար ոչխար երկարին>>:

/ 3 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն

0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Գ- Լոյսի, լուսաւորութեան համար թոռնուհիին մաղթանք կա՞յ: Հաստատեցէք ձեր պատասխանը իր տողերով: Իսկ այս բանաստեղծութիւնը այսօրուայ եւ գալիք ժամանակներուն համար ալ իմաստալի՞ է, ինչու՞: /8 նիշ/

Գ -Այո, լոյսի եւ լուսաւորութեան մաղթանք կայ իր թոռնուհիին:

-<<Թող աչքերուդ մէջ լողան ամէն ամառ նոր ճաճանչներ>>:

-Այսօրուայ եւ բոլոր ժամանակներու համար իմաստալի է:

-Մեծը՝ իմաստություն, լուսաւորութիւն, բարգաւաճութիւն ունենալու իր մաղթանքները կու տայ հարագատներուն:

/ 6 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Դ- Գտէք եւ գրեցէք այս բառերուն հոմանիշը բանաստեղծութեան մէջէն:
/2 նիշ/

Փայլին	
Ցանես	

Դ -Շողան
-Սերմանես

Ե- Հետեւեալ բառերը ճիշդ ընտրութեամբ եւ ըստ իմաստի գրեցէք ճիշդ նախադասութեան մէջ:/ 10 նիշ /

Գեղարուեստական, մշակութային, ըմբռնում, զուգահեռ, պարբերականներ, գաւառական, Սեբաստիա, կը վերակենդանանան, հեղինակութիւնները, ժողովրդական.

1900-1920 տարիներու _____ կեանքը,
հայութեան զոյգ թելերուն մօտ, կը ներկայանայ ընդհանրապէս
_____ ընթացքով: Միշտ կապուած հայ
իրականութեան, անիկա ընդհանրապէս կը ձգտի անդին անցնիլ
<<մեր կեանքը>> արտայայտելու, անոր անմիջականօրէն ծառայելու
պարզ առաջադրանքէն: Կը փորձէ զարգացնել մշակոյթի նոր
_____, ստեղծել գրական
ու _____ նոր արտայայտամիջոցներ:
Մշակութային շարժումը կը ծաւալի Պոլիսէն մինչեւ յետին
_____ քաղաքները: Վարժարաններ
_____, կը բացուին նորեր՝ մայրաքաղաքին մէջ,
Վան, Կարին, Խարբերդ, _____ : Պոլսոյ մօտ կը
գործէ Արմաշի դպրեւանքը: Կը հիմնուին նոր թերթեր,
գրական _____, տարեգիրքեր: Կը գործեն
ժողովրդական լսարաններ, գրադարաններ, մշակութային
միութիւններ, հրատարակչատուններ:
Երաժշտութիւնը, հոգեւոր բայց մանաւանդ
_____, Պոլսոյ մէջ կը հնչէ շնորհիւ Կոմիտաս
վարդապետի գործունէութեան ու կազմած երգչախումբերուն:

Անոր Երաժշտական _____ պիտի ապրին իրմէ
ետք՝ իբր մնայուն արժէքներ. Իր հասցուցած աշակերտները պիտի
շարունակեն իր գործը:

- Ե Մշակութային
- Զուգահեռ
- Ըմբռնում
- Գեղարուեստական
- Գաւառական
- Կը վերակենդանանան
- Սերաստիա
- Պարբերականներ
- Ժողովրդական
- Հեղինակութիւնները

2 ՆԻԹԻ ԸՄԲՌՆՈՒՄ ԵՒ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (30 նիշ)

Ուշադրութեամբ կարդացէք հետեւեալ հատուածը եւ պատասխանեցէք
հարցումներուն:

Շէնքը չափազանց հին ըլլալուն՝ փոր տուած էր բակին կողմը, իսկապէս
վտանգաւոր կերպով: Եւ որպէսզի չփլի, անոր կոթնցուցած էին փոքրիկ
աւել մը: Այս անարգանքէն զատ շէնքին կոթնցուցած էին նաեւ երկու
հսկայ գերաններ՝ որոնք սալաքարերէն մեկնելով կը նետուէին մինչեւ

երկրորդ յարկ է հոն՝ ըստ պարագային՝ ականջ կու տային թռչնիկի մը դայլայլին կամ փռուած լաթեր կը չորցնէին:

Այդ գերաններուն տակն է կծկտած Տիրանի բնակարանը, որ կը բաղկանայ գետնայարկ երկու սենեակներէ: Անոնցմէ մէկը հազիւ հազ կրնայ անկողին մը պարունակել, որով Տիրան զայն կը կոչէ ննջարան եւ հոն կը պառկի: Իսկ միւսը որ ընդարձակ է, կը ծառայէ միաժամանակ իբր դերձակի աշխատանոց եւ իբր դերձակի խոհանոց:

Մեքենային տակ, արդուկին քով եւ սեղանին շուրջ, կերպասի կտորներ կը սողան: Պատին վրայ կ'երեւի ելեկտրականութեան հին հաշուիչ մը, որ Տիրան <<կրթած է>>: Ան կը հաշուէ երբ Տիրան պատշաճ կը նկատէ եւ կը դադրի գործելէ երբ անհրաժեշտ չի տեսներ:<<Կեցիր>> կ'ըսէ, ու արդարեւ կը յաջողի կեցնել զայն՝ մի քանի ճարտար ապտակներով, որոնց գաղտնիքը ձեռք ձգած է երկարատեւ փորձերէ ետք:

. . . Անշուշտ մեծ էր Տիրանին ուրախութիւնը, քանի՛ տարիներէ ի վեր ասոնք առաջին ազգականներն էին, որոնց երեսը կը տեսներ: Բայց յանկարծ տրտմեցաւ երիտասարդը, որովհետեւ հեռաւոր ու սիրական դիմագիծեր իրեն երեւցան շատ որոշ գոյներով, անփոխարինելի ջերմութեամբ : Բարեբախտաբար գործնական հարցեր ծագեցան: Տազէս աղան , Տիրանի մէկ հարցումին պատասխանելով ըսաւ, թէ չէր ուզած իր այսչափ տարուան տունը քանդել մէկ անգամէն, ու Փարիզ չէին եկած ընտանեօք:

- Նայինք , ըսաւ վարպետը, եթէ աստեղի վիճակը գործիս գայ, կարենանք ապրուիլ, այն ատեն քրոջս կը գրեմ եւ ան ամէն բան ծախելով Սմբատին հետ կ'ելլայ կու գայ: Նայինք. . .

Զբաղումին համար չէին կրնար գնում ընել եւ կերակուր եփել: Տիրան վարպետը առաջնորդեց մօտիկ ճաշարան մը, ուր կերան՝ ծեծ ուտելու պէս: Երբ ազատեցան աղմուկէն, հրմշտութէն եւ խոհանոցի հոտէն, դարձան կարելու աշխատանքին եւ անվերջանալի խօսակցութեան:

Այն ատեն է որ Տիրան կանգ առաւ կարեւոր նիւթի մը առջեւ: Ի՞նչ պիտի ընէ վարպետը, եթէ կորսուի Փարիզի մէջ: Ինչպէ՞ս պիտի գտնէ ճամբան երբ ֆրանսերէն չի գիտեր: <<Մենք ասոր ճարը գտած ենք>>, աւելցուց ան, եւ անմիջապէս թուղթի մը վրայ գրեց. << Կը կոչուիմ Տագէս Պալապանեան, Հայ եմ, ու կը բնակիմ Մառքատէ փողոց: Կը խնդրեմ որ զիս հոն առաջնորդէք>>: Եւ վարպետին պատուիրեց որ այս թուղթը պահէ ինամբով:

Շահան Շահնուր <<Գաղթականներ>>

Ա- Ինչպիսի՞ պայմաններու՝ շէնքի ու բնակարանի մէջ կ'ապրէր Տիրան: Հատուածէն գրեցէք երեք (3) նախադասութիւններ որոնք կը հաստատեն ձեր խօսքը: / 7 նիշ /

2 Ա - Տիրան կ'ապրէր չափազանց հին շէնքի եւ փոքրիկ բնակարանի մէջ:

-Շէնքը չափազանց հին ըլլալուն՝ փոր տուած էր բակին կողմը, իսկապէս վտանգաւոր կերպով:

-Որպէսզի չփլի անոր կռթնցուցած էին փոքրիկ աւել մը:

-Այդ գերաններուն տակն է կծկտած Տիրանի բնակարանը, որ կը բաղկանայ գետնայարկ երկու սենեակներէ:

/5 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն

0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար

Բ- Հերոսներեն մեկը՝ Տագեւը, իր ամբողջ ընտանիքն ու եկած էր Փարիզ: Ինչու՞ : Ինչ էր իր մտածումը: Ձեր խօսքը հաստատող տողեր գտեք հաստատված են եւ գրեցեք: / 7 նիշ /

Բ -Ձե, ամբողջ ընտանիքով եկած չէր Փարիզ:

-Իր մտածումն էր գործի սկսիլ եւ եթէ կարելի ըլլար ապրուիլ, այն ատեն ընտանիքը գար:

-Եթէ աստեղի վիճակը գործիս գայ, կարենանք ապրուիլ, այն ատեն քրոջս կը գրեմ եւ ան ամէն բան ծախելով Սմբատին հետ կ'ելլայ կու գայ:

/ 5 նիշ բովանդակութիւն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտութիւն
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Գ- Ինչ կարելոր նիւթ մը վերջաւորութեան կը զբաղեցնէ մեր հերոսները: Ինչպիսի՞ լուծում կը փորձեն տալ այդ խնդիրին: Հեղինակին գրածով այս մասին՝ հաստատեցեք ձեր պատասխանը: / 7 նիշ /

Գ -Կը մտահոգուին տեղւոյն լեզուն չիմանալու հարցով:

-Փարիզի մէջ կորսուելու պարագային՝ ճամբան ինչպէ՞ս գտնելու հարցով:

-Թուղթի մը վրայ գրեց. <<Կը կոչուիմ Տագեւ Պալապանեան, հայ եմ, ու կը բնակիմ Մառքատէ փողոց: Կը խնդրեմ որ զիս հոն առաջնորդէք>>:

/5 նիշ բովանդակություն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտություն
0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Դ- Պարտադրաբար այլ երկիրներ գաղթած ուրիշ շատ հայեր ալ , կը կարծէ՞ք որ ունեցան այսպիսի մտահոգութիւններ: Այսպիսի պատմութիւններ անցեալի իրականութիւնները կրնա՞ն սորվեցնել մեզի: Նման խնդիրներ ժամանակակից իրականութեան մէջ կա՞ն: Այսօր ալ ուրիշ երկիր գաղթած մարդիկ ինչպիսի՞ դժուարութիւններ կրնան ունենալ առօրեայի մէջ: / 6 նիշ/

Դ -Այո, շատ ուրիշ հայեր ալ ունեցան այսպիսի մտահոգութիւններ:

-Այո, կրնան սորվեցնել:

-Ժամանակակից իրականութեան մէջ կան նման խնդիրներ:

-Գրել անձնական կարծիք - կրթական, տնտեսական, աշխատանքային, ընկերային.

/4 նիշ բովանդակություն 2 նիշ կառուցուածք եւ արտայայտություն
0.25 նիշ պիտի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

Ե- Այս հատուածին համար գրեցէք երեք(3) տարբեր վերնագիրներ: /3 նիշ/

Ե -Իւրովի որոշում

/ 0.25 նիշ պիտի պակսի իւրաքանչիւր ուղղագրական սխալի համար/

3 ՇԱՐԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ (40 նիշ)

Կարդացեք ուշադրութեամբ այս հատուածը Մայքլ Արլէնէն եւ երեւակայեցեք ու գրեցեք շարունակութիւնը, ձեր պատմութիւնը՝ Հայրենիքի մէջ: (Շուրջ 250 բառ)

Այսպէս՝ ես շարունակեցի կարդալ հայկական անցեալին մասին - շատ հեռուոր պատմական անցեալին մասին:

- Պիտի ըսեմ քեզի,- Սարոյեան դարձաւ ինձի, եթէ կ' ուզես գիտնալ հայերու մասին, պէտք է Հայաստան երթաս: Նոյն տարին մեկնեցայ Հայաստան. . .



3 Տրուած նիւթով կ'ակնկալուի զարգացնել իրենց մտածումները եւ զգացումները:

/12 նիշ բովանդակութիւն 10 նիշ կառուցուածք 12 նիշ արտայայտութիւն 6 նիշ ուղղագրութիւն. իւրաքանչիւր 5 ուղղագրական սխալի համար պիտի պակսի 1 նիշ/

Ուշադրութիւն դարձուցեք ուղղագրութեան եւ ձեռագիրին:

Յ Ա Ջ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն